

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէց)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են  
իրաբանայի բառին 2 կոպեկ.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

## ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն  
և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝  
6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի  
ամսվանը՝ 1 ռուբլի:

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ Տաիբէն, թէ՛ Ռուսերէն և թէ՛ օտար լիզուներով:  
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարայայ և Բարձրակապ փողոցն, անկիւն):  
Ռուբլի քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция «Мшакъ», իսկ  
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

### ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Գործերու խելացի եղանակ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Գանձակից. Նամակ Բաղախանից. Նամակ Խրե-  
բարդից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-  
ՍՈՒԹԻՒՆ. Վրչիկը II Կ. Պօրտու. Նամակ Ա-  
մերիկայից. Արտաքին լուրեր. — ՀՅՈՒՊԻՐՆԵՐ.  
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.  
Ֆերագանեան անկարգութիւնները:

### ԳՈՐԾԵԼՈՒ ԽԵԼԱՅԻ ԵՎԱՆԱԿ

Ամեն անգամ, երբ մամուլը լոյս է հա-  
նում յուզիչ տեղեկութիւններ այս կամ  
այն գաւառի մէջ տեղի ունեցած անբը-  
րիւթեան և ուրիշ համաճարակ թշուա-  
ռութիւնների մասին, խելոյն մի անախորժ  
գրութիւն է ստեղծվում: Մի կողմից մա-  
մուլի տեղեկութիւններն ազդում են հա-  
մարակազ կարծիքի վրա և հարց է յա-

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ՖԻՐԳԱՆԵԱՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պաշտօնական «Правительственный Вѣстник» լրա-  
գրում գտնուած են Կետեւեղ մանրամասնութիւնները  
Անգլիանի անկարգութիւնները մասին:

Քննութիւնը մանրամասն կերպով բացա-  
րում է այն պատճառները, որոնք նպատակին  
Իշանի (պատասխանութեան գլխաւորի) և նրա  
կողմնակիցների մտադրութեան զարգացման.  
ընտրութիւնը այլ ևս տարակոյս չէ թողնում, որ  
Ֆերգանեան դէպքերը բնկիկեցան մասնաբաժան  
Ֆանաուրիստութեան ազդեցութեան տակ. մասնա-  
բաժանների համար՝ զարգացման գաղափարը  
մինչև այժմ էլ պահել է իր սյուղ և նշանակու-  
թիւնը: Իշան չէր գնահատում, թէ՛ Ռուսներ  
րի կողմից եղել են ճշմունքներ, բայց սասց, որ  
մուսուլմանների բարբերի մարդկութիւնը վնասվեց  
Ռուսների հետ ունեցած շփումից: Նոյնպէս Ռու-  
սագրութիւն է դարձնում այն փաստը, որ մե-  
ղադրողները և վիճակների մասնաբաժնի ոչ ոք ջոյց  
չը տուեց թէ՛ Ռուսաց վարչական մարմինների  
կողմից որ և է ապօրինի գործունէութիւն է  
եղած:

Ֆերգանայի տեղական ազգաբնակչութիւնը  
պահպանելով իր հաւատը, սովորութիւնները,  
կրթութիւնը, կառավարութիւնը և ստորին դա-  
տարանները, կողմնացած լինելով իր բարձրեց-  
րում և զիւղերում, հակված էր նայելու Ռուսաց  
տիրապետութեան վրա, իբրև մի պատահական  
և անցողակի երևոյթի վրա: Այդ ազգաբնակչու-  
թեան մէջ շատ տարբեր են գտնվում, որոնք  
կրթվել են նախկին խանական ժամանակի իւր-  
ւորութիւնների մէջ: Խաների օֆիցերներն ու  
պաշտօնեաները մնալով անգործ, կառավարու-  
թեան փոփոխութեան հետ կորցնելով իրանց  
իշխանութիւնն ու ազդեցութիւնը, անբաւական  
էին նոր կարգերով սովոր չէին խաղաղ աշխա-  
տաւոր կեանքին: Ռուսի միշտ պատրաստ էին

լրացվում օգնութեան կազմակերպութեան  
մասին: Իսկ միւս կողմից այդ նոյն տեղե-  
կութիւնները, որոնք մամուլի միջոցով  
գտնուում են ընդհանուր սեփականու-  
թիւն, շատ անգամ պաշտօնագետ դեռ  
այսպիսի չեն լինում տեղական լրատու-  
թեան և այդ պատճառով ծագում է մի  
խուլ պայքար մամուլի, հասարակաց կար-  
ծիքի և տեղական իշխանութեան մէջ:  
Տարաբարբար արմինստարացիայի տեկա-  
կան օրգանները շատ անգամ յետաձգում  
են օգնութեան գործը, սպասելով պաշտօ-  
նական տեղեկութիւնների, իսկ դրա հե-  
տեանը լինում է այն, որ օգնութիւնը  
հասնում է այն ժամանակ, երբ արդէն  
բանը բանից անցել է...

Այդ տեսակէտից շատ նպատակայարմար  
և խելացի է հարցի հետ տեղի ու տեղը  
ճանաչմանալու եղանակը, որին դիմեց  
ներքին գործերի մինիստր Գորեմկին, ու-

միանալ ապստամբութեան: Դաւադրութեան  
տարածման նպատակով էր և այն, որ բուրձով  
հակողութիւն չը կար այն ժողովրդի հոգեւոր  
կեանքի երևոյթների վրա, որ հոգեւոր-բարոյական  
կողմից ձգտում էր դէպի արտասահմանեան  
մասնաբաժան կենտրոնները: Դաւադրութեան  
զարգացումը կապում են մի ոմն Հայր-Աբդու-  
Ջալիլ Միր-Սաղը-Կարիբիլի երևան գալու հետ.  
այդ մարդը եկել էր Կ. Պօլսի: Կեռ 1895-1896  
թվականների ձմեռը, երբ նա Կաշգարից Անդի-  
ժան հասաւ, լուր տարածվեց, թէ նա իր հետ  
բերել է մի մազ Մուսամմէդ մարգարէի միւր-  
բից և ժողովուրդն սկսեց գնալ նրա մօտ երկը-  
պագութեան: Բայց վախենալով իշխանութիւն-  
ների հալածանքից, նա հեռացաւ երկրից և,  
երևի, նորից վերադարձաւ Քուրդիստան: Այս տարի  
ձմեռը Աբդու-Ջալիլ նորից լոյս ընկաւ Ֆերգա-  
նեան շրջանում, գնաց Իշանի մօտ մարգարէի  
մազի հետ և սուեց նրան մի հրովաբարակ և  
խաղաղ, որոնց որպէս թէ թիւրքաց սուլթանն  
էր ուղարկել: Ապստամբութիւնից մի հինգ օր ա-  
ռաջ նա ուղարկեց Իշանին, նոյնպէս սուլթանի  
անունից, մի ոսկի մատանի և կանաչ դրօշակ,  
որի տակ պիտի յայտարարվէր զարգացմանը:  
Իշան Մասնէդ-Ալին՝ Աբդու-Ջալիլի ձեռքով սուլ-  
թանից բերած հրովաբարակին տալիս էր մեծ  
նշանակութիւն, ընդունելով նրան իբրև խալիֆի  
օրհնութիւն և հրաման՝ Ռուսների դէմ զարգա-  
ված սկսելու համար, մինչդեռ այդ հրովաբ-  
տակի մէջ, որի իսկական ծագումը դեռ չէ հաս-  
տատուած քննութեամբ, ասված է միայն այն, որ  
սուլթանը զայնորդութեան իրաւունքով մարգա-  
րէի վարչապետութիւնը յանձնում է Հազրէֆ-  
Մասնէդ-Ալիին՝ տարածելու համար:

Ապստամբութեան միւս պատճառը, որ քննու-  
թեան միջոցին է պարզված, այն է՝ որ 1886  
թվին զարգանի խորհրդական Գրիսի յանձնաժո-  
ղովը տեսնելով որ երկրում խաղաղութիւն է  
տիրում և կարծելով թէ այդ խաղաղութիւնը  
կատարեալ նուաճման նշան է, առաջարկեց տալ  
տեղացիներին այն իրաւունքները, որ վայելում  
էր բուն Ռուս ազգաբնակչութիւնը:  
Քորբեստանի մէջ նոր, անխախտ և յանախ  
հարկաւոր է համարվում ունենալ շրջանային

րովհետև այդ եղանակով կարելի է շտա-  
պեցնել օգնութեան գործը, առանց դիմե-  
լու երկար գրադրութիւնների և անտեղի  
ձեւակաւութիւնների:

Այդ տեսակէտից ուղարկութեան արժա-  
նի է վերջին փաստը. այս տարի Ռուսաս-  
տանում մամուլը շատ վաղ սկսեց նախա-  
զգուշացնել մի քանի նահանգներին վի-  
ճակված դժբաղդութիւնների մասին: Տե-  
ղական հաստատութիւնները կրկնեցին նոյ-  
նը աւելի կամ պակաս չափով: Ներքին  
գործերի մինիստր Գորեմկին վճռեց ան-  
ձամբ գնալ այն տեղերը, որտեղից լրա-  
վում են զանգատի ձայներ, և ահա մի  
շարքով է, ինչ նախնապարհորդում է  
Մարտի և նրան կից նահանգների շրջա-  
նում: Այդ ճանապարհորդութիւնը կու-  
նենայ դրական հետեանք, որովհետև թէ՛  
արմինստարացիայի, թէ՛ զեմմուլի և թէ՛  
տեղական ազգաբնակչութեան ներկայացու-  
ցիչները կարող են անմիջապէս յայտնել  
կառավարութեան բարձր ներկայացուցչին  
իրանց կարիքների մասին և կազմակեր-  
պել օգնութեան գործը նպատակայարմար  
կերպով:

Խելացի են և օգնութեան այն միջոցնե-  
րը, որոնք այժմ գործադրվում են: Պետու-  
թեան մասնակցութիւնը օգնութեան գոր-  
ծում այժմ հասկացվում է աւելի լայն  
կերպով, քան թէ միայն փող և հաց մատա-  
կարարին է: Այժմ մշակված են մի շարք  
այնպիսի միջոցներ, որոնք նպատակ ունեն  
պահպանել զիւղական տնտեսութիւնը կամ  
վերականգնել քայքայված տնտեսութիւնը:  
Օրինակ՝ ծրագրված է զիւղացիներին տնա-  
յին անասուններին և վիսաւորապէս բա-  
նող կենդանիներին պահել առանձին տե-  
ղեր և նրանց կերակրել կամ ուղարկել

դէպի արմինստարացիայի պաշտօնեաները ան-  
բարեկամաբար վերաբերվող դատաստանական  
իշխանութիւն մտցնելը, մի իշխանութիւն, որ  
խիտ բաժանված է արմինստարացիայից, — նը-  
պատեց այն նահանգներին, որ առհասարակ  
Ռուսաց իշխանութեան նշանակութիւնն ընկաւ  
տեղացիների աչքում: Նշանակութիւնը կորցրած  
գաւառապետի հետ մի շարքում առաջ եկան Ռու-  
սաց, թէ անարդարութեամբ լի ժողովրդական  
դատարանները, նշանակվեց ոչ այնքան ուժեղ Ռուս  
հայտարար դատարար, որ միշտ ծանօթ չէ տե-  
ղական կենցաղին, որ կրթված է այնպիսի հաս-  
կացողութիւններով մէջ, որոնց չէ կարելի գոր-  
ծադրել նոր նուաճած մասնաբաժան երկրի մէջ:  
Քննութիւնը բերում է մի դէպք, երբ հայտարար  
դատարարը արդարացրեց մեղաւորներին և ջնջեց  
մի գործ այն խաւովութիւնների մասին, որոնք  
տեղի ունեցան ընտրութիւնների ժամանակ և  
վերջացան նրանով, որ ձեռնվեցան զիւղական  
իշխանութիւնները և պրիստաւը, որ Ռուսաց  
գործի կապիտան էր: Եղել են դէպքեր, երբ գա-  
ւառապետները կանչվում էին դատարան իբրև  
վկաներ և նրանց ցուցմունքները վերաստու-  
ութեան էին ենթարկվում յանցաւոր և ստոր  
տեղացիների վկայութիւններով:

Այդ պատճառով քննիչ յանձնաժողովն առա-  
ջարկում է մի շարք միջոցներ, որոնցով կարելի  
է ապագայում անկարգութիւններ ծաղկելու ա-  
ռաջն առնել: Այդ միջոցներն են. գաւառական  
արմինստարացիայի նախկին իշխանութիւնն ու  
նշանակութիւնը կառավարչապէս վերականգնելը,  
ընտրողական սկզբունքի ջնջումը, Քորբեստանի  
ընդհանուր նահանգապետի իրաւաստութեան սահ-  
մանները լայնացնել, հիմնել այնպիսի յատուկ  
մարմիններ, որոնք կուսուժմաստիւն տեղացինե-  
րի հոգեւոր կեանքն ու կը հետեւն նրան: Քննիչ  
յանձնաժողովն անհրաժեշտ է համարում տալ  
գաւառապետին ընտրել և նշանակել զիւղական  
կառավարչներ և ժողովրդական դատարաններ,  
վերականգնել գաւառապետների իրաւունքը  
քննելու տեղացիներին ամուսնական և ընտանե-  
կան գործերը: Այժմեան պրիստաւները ամբ  
հարկաւոր է համարվում ունենալ շրջանային

հարեան նահանգները, որտեղ անբերրու-  
թեան տեղի չէ ունեցել. գարնանը պետու-  
թեան հաշուով գնել ուրիշ տեղերից կեն-  
դանիներ և ձեռնուու պայմաններով ծա-  
խել զիւղացիներին: Մրադրված են նոյն-  
պէս հասարակական աշխատանք-  
ներ Սարատով և ուրիշ քաղաքներում,  
որպէս զի զիւղացիները կարողանան ի-  
րանց աշխատանքով փող վաստակել և  
թեթեւացնել իրանց թշուառութիւնը:

Երբ մինիստրի նման հեղինակաւոր անձ-  
նաւորութիւն ինքը գլուխ է կանգնում  
օգնութեան գործին, երբ պետական հաս-  
տատութիւնները անմիջապէս նպատակ  
են թեթեւացնելու թշուառացածների վի-  
ճակը, երբ վերջապէս անվերջ գրադրու-  
թիւնների փոխարէն կարելի է հետ սկսում  
են ծանօթանալ տեղի ու տեղը, այն ժա-  
մանակ համարձակ կարելի է հաւատալ,  
որ սովն ու դժբաղդութիւնը չեն կարող  
մեծ քայլեր անել և ազգաբնակչութիւնն  
իր օր օր օգնութիւն կը ստանայ:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆԵՑ

Հոկտեմբերի 9-ին

Հատարակական գործը և հատարակական հար-  
ցը հետաքրքրում և զբաղեցնում է Նոր-Նախի-  
ջևանցուն միայն մի դէպքում՝ երբ պէտք է ծա-  
ռայել կուսակցութեան շահերին, և իբրև հու-  
ժառայ որ և ինչ կուսակցութեան, նա կուս-  
նում է գործունեայ, խոսում է, բողոքում է,  
հայտնում է, գնահատներ է գրում, անվերջ  
գնահատներ: Հակառակ դէպքում, երբ պէտք է  
գործել յանուս գործի, Նոր-Նախիջևանցին,  
անտարբեր է բոլորովին: Ահա ձեզ մի անհեր-

զիստարներ՝ Ռուսաստանի ներքին նահանգնե-  
րում գործող զեմստովոյի զիւղաւորների իրաւուն-  
քով և աւելացնել նրանց թիւը հասցնելով 18-ից  
48-ի: Պէտք է տալ ինչպէս որ նահանգաւոր  
իրաւունք՝ քաղաքներ երկրի սահմաններից մու-  
սկիւման հոկտարականներին և այլ անձանց, որոնք  
ֆեասակար են քաղաքական նկատմամբով, ա-  
ռանց յայտնուու արտոման պատճառները: Երկ-  
րի բարձր դատաստանական պաշտօնակիր հա-  
մար նշանակել պաշտօնեաներ, նախապէս ընդ-  
հանուր նահանգապետի համաձայնութիւնն ստա-  
նալու պայմանով, իսկ բոլոր պաշտօնեաներից հե-  
լիացնել կատարել նոյն նահանգապետի առա-  
ջին պահանջամբ, տալով նրան իրաւունք իր  
մօտ պահանջելու և նայելու ամեն մի գրագրու-  
թիւն, որ տեղի ունի դատաստանական պալատի  
և նրա պրօկուրորի և արդարադատութեան մի-  
նիստրութեան մէջ: Տեղական հոկտարականու-  
թեան և դպրոցների գործունէութեան, մասնա-  
բաժան վարչապետութիւնների զարգացման հե-  
տեւելու և վակուֆները կառավարելու համար  
հիմնել մի առանձին մարմին երկրի զիւղաւոր  
կառավարչի մօտ, իսկ նրա ճիւղերը հաստատել  
գաւառներում:

Ի վերջոյ պաշտօնական լրագիրն աւելացնում  
է. «Վերոյիշեալ միջոցները, որոնք ձեռք են  
առնված Ֆերգանայի տեղական ազգաբնակչու-  
թեան վերաբերմամբ, անհրաժեշտ են, որպէս զի  
ապագայում տեղի չունենան զարգացման ան-  
միտ փորձերը: Եթէ Քորբեստանի տեղական ազ-  
գաբնակչութիւնը անարժան է Ռուսաց Քաղաւ-  
րի բարձր վստահութեան և չէ յոյց տալու անձ-  
նութիւններին Պահին և ընդհանուր հարկերին,  
այդ դէպքում նա ոչ միայն իրաւունք չունի,  
իբրև Ռուսաց մեծ ընտանիքի մի անդամ, օգտը-  
վել Ռուսաց կառավարութեան՝ նրան շնորհած  
շահերից և բարեբարութիւններից, այլ և կարող  
է զրկվել բարեբար հոյեկից, որոնք նուաճված են  
Ռուսաց արիւնով և որոնք այժմ նրա բարձր  
բարբօրութեան արժիւրն են կաղում:

քելի և գեղեցիկ փաստ: Նոր-Նախիջևանի հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը՝ յունիսի 12-ին որոշում է պ. Գ. Չուբարեանին ուղարկել Քէտովսի վերահասու լինելու Խաչիկեան դպրոցի ջրանցքի շինութեան և պ. Թուռաբարձութեան (որը շինել է այդ ջրանցքը) հայրենիքը ընդունել, Քէտովսի ուսուցչանոցի վարչութեան հետ տան պայմանը նորոգել և այնտեղի քաղաքային վարչութեան հետ բանակցութեան մէջ մտնել զբարոցապետական հողի մասին: Յուլիսի 8-ին պ. Չուբարեան ստանում է ճանապարհածախս երկու հարիւր ռուբլի և հաստարմատութիւն՝ հոգաբարձութեան կողմից: Յունիսի 26-ին գրովում է Քէտովսի ուսումնական վարչութեան, որ յուլիսի սկզբին գալու է հոգաբարձութեան անդամ պ. Չուբարեան, գրովում է նոյնպէս և պ. Թուռաբարձութեան, որ հայրենիքը յանձնէ պ. Չուբարեանին: Անցնում են երեք-չորս ամիսներ և մինչև այսօր պ. Չուբարեան չէ բարեհաճել որչափ, թէ երբ պիտի երթայ: Ասում են թէ այժմ հարկաւոր էլ չէ գնալ, որովհետև արդէն դպրոցապետական հողերը քաղաքային վարչութիւնը գրաւել է և հարկաւոր կը լինի սկսել ծանր դատ, մինչդեռ եթէ ժամանակին պ. հոգաբարձուն, որը դեռ յուլիսի սկզբին ստացել էր 200 ռ. ճանապարհածախսը, գնար Քէտովսի, զուցէ մենք ընդորովին չը տուէինք: Հոգաբարձուն պ. Չուբարեան «Презавоевнй Край» լրագրի հրատարակչութեան է և երբևէ հրատարակչութեան գրում է շատ փոքուն և գեղեցիկ խօսքեր ու ֆրազներ՝ նոր-Նախիջևանցիների անտարբերութեան դէմ դէպի հասարակական գործերն և հարցերը և մէկից, միւսից հայրենիք է պահանջում: Մենք մեր կողմից չենք պահանջում պ. Չուբարեանից հայրենիքը ինչպէս երեք-չորս ամիս նա չը կատարեց իր պարտքը, բայց կարծում ենք նա կը վերադարձի: զպրոցին ճանապարհածախսը, քանի որ նա Նոր-Նախիջևանից բոլորովին չէ էլ հեռացել դպրոցի գործի համար...

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ազգայնական 29-ին

Երբ «Մշակին» 165 և 167-րդ համարներում լայն տեսակով տարածուած էր այդ նամակից պահակները, որոնք ծանօթացան Աղայ Արաբկանի և Սիմեոն քանապատի Տէր-Խաչատրեանցի քաղաքորդութիւնների հետ, մեր ակամբային այստեղից, այնտեղից սկսեցին ձայններ հասնել, թէ արդեօք ինչպէս է վերաբերվել թեմական առաջնորդը թաւաքանի վարդապետի գործը ընթացքին հետ իրանց մեղադրանքները առատութեամբ թափում էին թէ կոնսիստորիայի և թէ թեմական առաջնորդի գլխին այն տեսակետից, որ յիշատակած մեղադրանքների կէտերը նրանց կողմից մնացել են առանց հետևանքի և ուշադրութեան չեն արժանացել:

Այս անգամ սրբազան պարտք ենք համարում այդ տարածանքութիւնները փարատելու և կոնսիստորիայի ու թեմական առաջնորդի վրա թափած անտեղի մեղադրանքները չընկու: Երբ առաջնորդն ստանում է հայր թաւաքանի յայտարարութիւնը—1897 թվին, յունիսի ամսին, իսկոյն կոնսիստորիայի միջոցով բոլոր գործերը յանձնում է Չարէքի վանահայր Աստուածատուր վարդապետին ընկնելու: Վերջինս, չը գիտենք ինչ պատճառներից հարկազրկած, գործն սկսում է ձգձգել, Տէր-Սիմեոն քանապատի օգուտ քաղելով այդ ճանապարհը կառավարութեան հասանելիք փողերն սկսում է կամայական վճարել: Գործը մի տարուց աւելի է, որ հայր սուրբի ձեռքին է և երբ մինչև որ Տէր-Սիմեոնը բոլոր փողերը չը վճարի՝ ընտելութիւնը չի վերջանալ: Իսկ երբ բոլոր հայրը կը վերջանայ, այն ժամանակ էլ տէր-հայրը մեղադրվելու չափ յանցաւոր չի ճանաչվի:

Այժմ տեսնենք թէ Տէր-Սիմեոնը մինչև այժմ արքան է վճարել կառավարութեան և ինչքան է մնում: 1) Բանանց գիւղի պողի ցորենի, իսկի գին և սրբազան 70 ռ. որը ստացել է 1895 թվի յունիսի ամսին (մենք սխալմամբ մեր նամակում յիշել էինք Գետաչէն գիւղից ստացած 67 ռ.): հատուցել է կառավարութեան 1897 թվի դեկտեմբեր ամսին: 2) Գետաչէն գիւղից 1894 թվի սրբազան 85 ռ., որ ստացել է 1895 թվի յունիսի ամսին, հատուցել է 1898 թվի յունիսի ամսին (Այս կէտը մուսայրութեամբ չէինք յիշել մեր նամակում): 3) Սուրբ գիւղից 1896 թվին ստացած 12 ռ. պողի ցորենի գինը հատուցել է 1897 թվի սեպտեմբերին: 4) Պատկառելիքից դպրոցների օգուտը 1896 թվին ստացած փողերի մասին, որը հաշուով պիտի լինէր 201 ռ. 60 կ., Տէր-Սիմեոնը իր յայտարարութեան մէջ

յայտնում է, որ ստացել է 158 ռ.: Այս գումարից 1897 թվի նոյեմբեր ամսին կառավարութեան հատուցել է 75 ռ., մնացած 83 ռ. վերցրել է ինքը ինչպէս գանձապահ և նախագահ ս. Լուսաւորիչ եկեղեցու երկսեռ դպրոցի հոգաբարձութեան նոյն դպրոցի համար: 5) Մուսայրութեան կառավարումը 246 ռ., որ պիտի հասնի ս. Յովհաննէս մայր-եկեղեցու երկսեռ դպրոցներին, չը նայած կառավարութեան հրամանին՝ մինչև այժմ մնում է Սիմեոն քանապատի յիշել մեր նամակում (մեր 6) 1895 թվի սեպտեմբեր ամսին Լճախիջևանից սպորտ ծախսած խաղողի գինը՝ 1900 ռ. 50 կոպէկից՝ կառավարութեան հատուցել է 1500 ռ. 50 կոպէկով: Յովհաննէս վարդապետ Երևանում բանաւոր պատուէրի համաձայն վճարել է Աղայ Արաբկանցին, և վերջապէս 7) Լճախիջևանի կառավարութեան կոնսիստորիայից ստացած 820 ռ. 92 կոպէկով: Տեսնում էք, ընթացքով, որ թեմական առաջնորդը և կոնսիստորիան գործը անուշադիր չեն լինել, հետաքրքրվել են և, որքան լուսմ ենք, այս քանի օրերս հայր են պահանջել կառավարութիւնից, թէ Տէր-Սիմեոն քանապատի որքան է վճարել և ինչքան է մնում նրա վրա: Մենք մեր կողմից խորհուրդ կը տայինք տէր-հոգաբարձուն, որ շուտապէս վճարել մնացած դրամները և դրանով քաւել իր յանցանքը:

ՆԱՄԱԿ ԲԱԼԱՍՆԻՑԻՑ

Հոկտեմբերի 7-ին

Շատ անգամ է մեզ պատահում կարգաւ Բալասնիցի բանուոր դասակարգի մասին: Թերթերը մեր պարբերական հրատարակութիւնները և կը տեսնենք, որ նրանց մասին շատ է գրված: Բայց կայ մի դասակարգ, որ հետզհետէ աւելի ու աւելի մեծ ծաւալ է ստանում, և թէ ոչ մուսայրութեան, զոնէ անուշադրութեան է մատնված, դա գործակատարների դասակարգն է: Չը նայած, որ գործակատարները այժմ Բալասնիցում մի պատկառելի թիւ են կազմում, այնու ամենայնիւ նրանց իրաւունքների մասին լեռնային վարչութեան կողմից, որքան գիտենք, որոշ կանոններ չը կան սահմանված. նրանք էլ ղեկավարվում են նոյն կանոններով, ինչ որ հասարակ բանուորները: մինչդեռ այդ կանոնները, որոնցով բանուորներն են ղեկավարվում, գործակատարների համար միանգամայն անյարմար են: Ենթոյն այդ կանոնների մի կէտի, գործակատարը կարգաւ Տէր-Սիմեոնի վարչութեան ձեռքին: Ի՞նչ, ինչ կայ, այսօր կը վարձեն, վարձը մի չնչին պատճառով՝ տասնութիւն օրվայ ուճիկը կը տան ու փառաւոր կերպով դուրս կը վաճուեն, կամ թէ չէ կը պատուիրեն մինչև տասնութիւն օր պաշտօն գտնել ու հեռանալ: Սա կայն գործակատարի ու հասարակ բանուորի մէջ մեծ տարբերութիւն կայ, նրանք տարբեր պայմանների մէջ են գրված ու տարբեր պահանջներ ունեն, հետևապէս և պէտք է տարբեր կանոնների ենթարկվեն: Արդէն է բանուորը նա այսօր մի ֆիրմայից արտաքսված, միւս ֆիրմայում իսկույն տեղ է գտնում, որովհետև բանուոր գասակարգի համար առհասարակ բաց տեղեր համարեն միշտ լինում են. իսկ գործակատարը,—նա դեռ ևս երկար ժամանակ պիտի պարապ թափառի, որ այնուհետև այն էլ սրտացաւ. բարեկամների ու խնամքների շնորհիւ կարողանայ պաշտօն ստանալ: Չէ որ մեր իսկու կառավարիչները առանց բէ կօմենդացիայի գործակատարին՝ չեն ընդունում, թէ կողով գործը լաւ հասկանալիս լինի. բայց քանի բարդաւոր գործակատարներ կը գտնվեն, որ բէ կօմենդացիայի ունենան. ի հարկէ շատ քիչ: Իսկ միւսները, անշուշտ կը հարցնեն ընթացքը.—միւսներն էլ իրանց պարագայութեան տարեկարճ կատարելուց յետոյ, սքան ու նրան խնդրելով, աղաչելով, մի կերպ պաշտօն են ստանում, ճիշդված՝ պարապ ժամանակը արած պարտքերի տակ: Անձ, որտեղից է ծագում գործակատարների անտեսական քաղաքական: Ծառանքութեան ժամանակն էլ գործակատարը մի առանձին բան չէ ներկայացնում. վարչութիւնը հրամայում է երեք կամ չորս հոգով մի սենեակում ապրել. խեղճ գործակատարը կամ պէտք է լինի, կամ թէ չէ հրամարկի պաշտօնից: Անցեալներում մի մարդ, որ մի ֆիրմայի մէջ աչքի ընկնող պաշտօն ունէր, այս միտքն էր արտայայտում. գործակատարին և առհասարակ բոլոր ծառայողներին այնքան էլ յարմարութիւններ չը պէտք է տալ, որովհետև նախ՝ մենք էլ չենք ստացել ժամանակին ու աւելի լաւ ենք ծառայել և երկրորդ՝ որ դրանով նրանք երես են առնում ու դառ-

նում շատ պահանջներ անող...: Բայց պարտքը մուսայրութեան է, որ անցան այն երանելի ժամանակները, երբ գործակատարը, զուրկ ամենահասարակ յարմարութիւններից, մի քանի տարի ճրի ծառայելուց յետոյ մի նոյնքան ժամանակ էլ զարգաւոր չէր ունենում իր ուղեւորի քանակութեան մասին: Այժմ այդպէս էլ Բալասնիցում, չնորհիւ այն հանգամանքի, որ մեր նաւթային առևտուրը համալրարձային բնաւորութիւն է ստացել, եւրոպական կարգ ու կանոնները՝ ծառայողների նկատմամբ, այժմ ընդհանրացել են և հետզհետէ աւելի պիտի ընդհանրանան. հարցը ժամանակի պահանջ է դարձել: Բայց դրանից, հանգամանքները շատ են փոխվել. առևտուրը ընդարձակվել է երկիրը հարստացել է, մարդիկ մուսայրապէս առաջ են գնացել, և այժման գործակատարներն ու ծառայողները այլ ևս նախկին ջղով բռնածները չեն: Միթէ խելագար են եւրոպացի նաւթարդիւնաբերողները (Նորէլ և այլն), որ այնքան յարմարութիւններ են տալիս ծառայողներին, կամ միթէ նրանց գործերն աւելի արդի են առաջ գնում:

Ենթադրում ենք, որ ընդհանրապէս ծառայողների աննախաճիկի գրութեան պատճառը կապիտալիստներն են. բայց այս դէպքում, Բալասնիցի նկատմամբ, մեր կարծիքով մեղաւոր են ոչ թէ կապիտալիստները, այլ մեր ֆիրմաների վարչութիւնները: Ֆիրմաների վարչութիւնը, զլիստորապէս կառավարիչները, շատ բան կարող են անել, եթէ միայն բարի ցանկութիւն ունենան: Թէ բանուորների և թէ գործակատարների գրութեան բարեւոքում միանգամայն նրբանցից է կարգված: Բայց մեր կառավարիչները այդպիսի խնդիրների վրա մտածելու ժամանակ չունեն. նրանց ուշն ու միտքը կենտրոնացած է գեղեցիկ կտորների և ուրիշ բաների վրա:

Այս ամենը ի նկատի ունենալով, մարդ չէ կարող չուրախանալ՝ տեսնելով այն մի շարք բէֆորմները, որ նաւթարդիւնաբերող շարքը Մեղիքեանը մտցնում է իր նաւթահանքում: Պարտնը Բոմանի լանջի վրա կառուցել է մի գեղեցիկ շինութիւն, ուր ապրում են իր համարեա բոլոր ծառայողները: Երևութիւնը հեռու լինելով իր նաւթահանքերը, բանուորներին ու գործակատարներին կտաքով (զիրիման) են սեղ հասցնում: Սեղանը բոլոր բանուորների համար ընդհանրապէս է. ունեն առանձին գեղեցիկ սեղանատուն (ուրիշ տեղեր առանձին սեղանատներ չը կան). կերակուրը բոլորի համար պատրաստում է գրասենեակի կողմից նշանակված խոհարարը: Վերակուր ծախսը հոգում են իւրաքանչիւրի ուճիկից, մի թեթիւ մասն հանելով (ճիշդ քանակութիւնը չը կարողացանք իմանալ): Նշանակաւորներով (ուրիշ ֆիրմաներում միմիայն գործակատարներին են տալիս մասնակալ, այն էլ փայտից, իսկ բանուորները թափված են լինում մի կողմում կապած ընդհանուր թափով (վրա): Նոյն և աւելի յարմար պայմանների մէջ են և գործակատարները: Պարտնը Մեղիքեան, ինչպէս լուսմ ենք, մտադիր է բազմին, դրադարան և ուսումնասիր չինել տալ: Վերջինը ծառայողների երեխաների համար: Լաւ չէր լինի, եթէ միւս նաւթարդիւնաբերողներն էլ նոյնը անէին:

ՆԱՄԱԿ ԽՊԱԿՐՈՒԹԵԱՆ

Մտկայի, հոկտեմբերի 7-ին

Խորքով գետնէք «Մշակին» մէջ այս երկատուրը: Խորին շնորհակալութեամբ ստացանք մայիս ամսվայ ընթացքում պ. Յ. Յովհաննիսեանից, բժ. Ա. Չարգարեանից և Յ. Սուհուրեանից 180 ռուբլի, որ ժողովել են իրանց ծառայողների շրջանում՝ յօդուտ Մտկայի հայ ուսանողներին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Առախուժեամբ պէտք է հարգուենք, որ թիֆլիսում կառելանայ մի նոր պրոգրեսիւստի: Բաղաբային դուստն, հոկտեմբերի 12-ի նիստում, մանրամասն ընտելութեան ենթարկելով ձայնաւոր Ա. Բաբոյի առաջարկութիւնը այն մասին, որ նա արել էր անցեալ տարի, հասնութիւն տըլեց պրոգրեսիւստի բանաւոր առաջարկին և իր կողմից յատկացրեա տարեկան 6,000 ռուբլի: Պրոգրեսիւստի պէտք է բացվի Հաւաքարում, Կախէթեան հրապարակի մօտ: Ինչպէս երևում է, ներկայումս Հաւաքար թաղից թիֆլիսի դիմադրանքներում սովորում են 140 աշակերտ:

Մտկայում հրատարակող «Новости Дня» լրագիրը իր № 5518-ի մէջ նոյնպէս տպագրել է

հանդուցեալ Անդրէաս Արժուտու պատկերը՝ կենսագրութեան հետ միասին:

Արանից մի քանի ամիս առաջ թիֆլիսի այժմեան քաղաքապետին առաջարկել էր կազմել թիֆլիս քաղաքի պատմութիւնը: Քաղաքային դուստայի վերջին նիստում ուղարկան յայտնեց, որ այդ գործը համար ծախս կը պահանջվի մինչև 15,000 ռուբլի: Չայնաւորները չը ջանում թիֆլիսի ընդարձակ պատմութեան հրատարակութիւնը այդպէս մեծ ծախսով ընդհանուր հասնութիւնը չը գտան: Աստի դուստն որոշեց ընտրել ձայնաւորներից մի յանձնատուրով, որ, ուղարկայի հետ միասին, ընդի այդ հրատարակութեան վերաբերեալ բոլոր գործերը: Յանձնատուրով ընտրութիւնը յետաձգվեց մինչև դուստայի յաջորդ նիստը:

ԱՍՈՒՑԻՍՏԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 11-ին հասարակական գրադարան-ընթացարանի դահլիճում կայացաւ Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը: Ներկայ էին 17 անդամ միայն: Ժողովի ներկայական հարցն էր՝ գտան և հաստատել՝ վարչութեան կազմը՝ առաջիկայ 1899 թվի համար նախահայրը, որը ձայների առաւելութեամբ, հաստատվեց: Նախահայրով մուտք սպասվում է ընդամենը 1,660 ռուբլի: Չէ կարելի չը խոստովանվել, որ մեր հասարակութիւնը ընդհանրապէս, իսկ անդամները մասնաւորապէս սքան են վերաբերվում դէպի ընկերութիւնը և ընդհանուր ժողովներին առհասարակ շատ քիչ մասնակցող է լինում: Ամեն անգամ երբ ընտրութիւն է լինում՝ հարց 10—15 անդամ են ժողովում, այն էլ զօռնի: Ընկերութեան անդամները շատ սխալվում են, եթէ կարծում են, թէ իրանց պարտքը կատարում են, հատուցանելով 5 ռուբլի: Այդպիսի անտարբերութեան շնորհիւ տեղական որ և է ընկերութիւնը երբէք չի զարգանայ, այլ փոքր առ փոքր կը մեռնի»:

ՊԵՏՏԻՊՈՐՍԿԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին թեմական առաջնորդ Արխատկէս արքեպիսկոպոստն այցելեց Պետախորսկ: Եղանակի վատ և ուշ լինելու պատճառով նա չը կարողացաւ եկեղեցու բեմից իր ողջմիտ տալ ժողովորդին, ուստի ծիսակատարի ժողով հրաւիրեց երէցիոս Ա. Սվէշնիկեանցի տանը: Սրբազանը՝ բացատրելով առհասարակ թեմական առաջնորդների թեմը չը շրջելու նպատակը և խօսքը մասնաւորապէս Պետախորսկի վերաբերմամբ, կայն առաւ այն կէտի վրա, որը արդէն վաղուց ժողովորդի ցանկութիւնն էր, այն է՝ ունենալ մշտական երգեցիկ խումբ եկեղեցում իր խմբապետով: Վերջնականապէս լուծվեց այդ խնդիրը. ընտրվեց մի առանձին մասնաժողով հետեալ՝ անձինքներից՝ պ. Սվէշնիկեան, Ե. Խօջայեանց, Գ. Սուքիսեանց և տ. Եղաւեան և Սվէշեանց, որոնք պէտք է հոգ տանեն մշտական երգեցիկ խումբ ունենալու համար, և արդէն, ամենքի ցանկութեան համաձայն, Երևանապոլսի Գոնիկեանց շուտով գնալու է թիֆլիս՝ երգեցողութեան ուսուցիչ եկեղեցանցի մօտ սովորուելու: Հետաքրքրվելով ժողովորդի կարեցներով՝ սրբազանը մանրամասն հարց ու փորձ արեց այդ մասին: Ամիս 2-ին, առաւօտեան գնացողով, առաջնորդը Պետախորսկից ճանապարհ ընկաւ Վաղարշապատ:

ՎՂԱԿԻՍԿԱՎԱՉՔԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 2-ին Վաղարշապատի հայոց հասարակութիւնը առիթ ունեցաւ ընդունելու թեմի առաջնորդ արքեպիսկոպոստ Արխատկէս Արքեպիսկանին Յով. Թաթուղեանի տանը: Սրբազանը չէլեց առաջին օրից մեզ վրա ազդու տպաւորութիւն թողեց: Մենք սպասում էինք, որ կերակրի օրը նա պատարազ կը մատուցանի, բայց սկզբութեան պատճառով անկարող եղաւ: Պատարազին, «Հայր մերից» առաջ բարձրանալով սեղանի մի բարոյ խօսեց, բացատրեց հայոց եկեղեցու պատմական նշանակութիւնը և պարզաբանեց եկեղեցականները կոչումն ու ամեն մի հաստացեալի պարտականութիւնը թէ իր եկեղեցու վերաբերմամբ և թէ հասարակական ասպարիզում: Նոյն օրը Սեղաւեան արքեպիսկոպոստը այցելեց նահանգապետին, ժողովորդական ուսումնասիրաների ղեկավորին և տեղական գիմնազիայի և բժշկական դպրոցների ղեկավորներին: Հետաքրքրվեց հայ աշակերտների առաջադիմութեամբ՝ ընդհանրապէս և կրօնական դաստիարակութեամբ մասնաւորապէս: Ինչպէս լսեցինք, սրբազանը շատ անբաւական է կրօնաւսուցչ քանաններից, որոնք իրանց յանձնված պատճառը բարեխղճաբար չեն կատարում: Մենք յուսով ենք, որ այդ հարցն անուշադիր չի մնայ: Առաջնորդը, ծանօթանալով գործերին՝

մեր բանասիրտի մէկը զրկեց իր պաշտօնա-վարութիւնից, իսկ միւս երկուսն արժանացան յանդիմանութեան: Այսօր, հոկտեմբերի 6-ին, սրբազան հեռագրաւ մեր քաղաքից և ուղիորդեց դէպի Գրգորիայ:

ԲԱՊՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Հայոց ներկայացուցիչները, շնորհիւ թանգ գնորդի, համարեա անմատչելի են աշակերտներին համար, ուստի ցանկալի է, որ աշակերտներին զիջում անվերջ Համոզված ենք, որ այդպիսով թատրոնի ղեկավարները ոչ միայն չեն մնասովի, այլ կողովեն, որովհետև թատրոնում միշտ դատարկ տեղեր չստանան ինչու և այդ տեղերը կը բռնեն աշակերտները:

ԱԹԱԼՅԱՅԻՆՈՒՆ մեզ գրում են. «Մեր գաւառի մի քանի տեղերում, ինչպէս ըստ ենք, տարածված է տաւարի ժամատախտի հիւանդութիւնը, ուստի արգելված է քաղաք ներմուծել այնպիսի կենդանիներ, որոնց առողջութեան մասին վկայականներ չը կան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻՂՆԵՄ II Գ. ՊՈԼՍՈՒՄ

«Ուսաց հեռագրական գործակալութիւնը» հետեւեալ մանրամասնութիւններն է հարգուած մարտաբար լրագրեցին:

Հնդկանքութիւն Դոլմա-Բախչի պալատում: Դռները առաջ կանգնած էր նուազախումբը և զվարդիայի երեք զօրախմբեր զբաղակով: Այդտեղ էին և բարձր Մարշալ, դեպատանտան և հիւպատոսարանի անդամները, զինեալները, միջնատները և այլ անձինք: Ամենը շար ընկած էին մինչև ծովափը: Ժամի մօտ 9 1/2-ին երկաց սուլմանը մարշալի համազգեստով և գերմանական շքանշաններով: Փողոստիները հարուածները ժամանակին յայտարարել էին կայսերական զոյգի գալուստը: Կայսերական նուազախումբը մտնելով սուլմանի սուլմանը գլուխ տուեց կայսերական զոյգին, որ պատասխանեց մտերմաբար: Սուլմանն օդնեց կայսրուհուն ափ իջնելու և, գլուխ տալով, սեղմեց նրա ձեռքը: Կայսրի հետ սուլմանը ողջագործեց վերին աստիճանի սրտապին կերպով և երկար սեղմեց նրա ձեռքը: Կայսրը վայրկիայի հուսարական համազգեստ ունէր, իսկ կայսրուհին մետաքսեայ բաց-մանրակազմով շքազգեստ: Սուլմանը առեց իր ձեռքը կայսրուհուն, կայսրը դեպատանի և արտաքին գործերի մինիստրի հետ էր գնում: Նրան հետևում էր պիտանա: Յետոյ մօտ քառորդ ժամ նախադասան սարժում, ուր կայսերական զոյգը աչխոթ խոսակցութիւն ունէր սուլմանի և թիկնապահներից մի քանիսի հետ: Կայսրուհին երկար խօսում էր արտաքին գործերի մինիստրի հետ: Ապա սուլմանը թեւ տըւած կայսրուհուն, տարաւ նրան դէպի կառքը, ուր նա նստեց Մանր-փայտի հետ:

«Ուղեորութիւն դէպի Երզր-Քիտուկ: Առաւօտեանից գերմանական զբաղակը ծածանվում էր Փօփրանիէի վրա: Փողոստներում հաղարատը մարդիկ: Զօրքերը շար զոյգը մի քիչ ուշացաւ և միայն անի ժամանակ, երբ հասաւ «Հօհնցօլէքն» նաւը և սուլմանը դուրս գնաց Դոլմա-Բախչի պալատից, հետևակ զինուորները վազվազ շար ընկան մինչև Երզր-Քիտուկ: Օֆիցերները քիչ առաջ ներջնուած էին զինուորներին, որ նրանք ցոյց տան գերմանական կայսրին, թէ ինչ լաւ զինուորներ ունի սուլմանը: Ժամի 10 1/2-ին գերմանական հիմնի ձայները յայտարարեցին կայսերական զոյգի գալուստը: Զօրքերը պատիւ տուին Հասարակութեան մէջ մեծ կենդանութիւն էր տիրում, սակայն աղաղակներ, ըստ թիւրքական սովորութեան, չը կային: Կայսրուհին բաւականութիւնից փայլող դէմքով խօսում էր սուլմանի հետ: Կայսրը, որի ազդու արտաքինը ամենքի վրա նկատելի տպաւորութիւն գործեց, զօրքերին սրտանց զինուորական պատիւ էր տալիս:

Գերմանական դեսպանատան մէջ տեղի ունեցած նախաձայնի կայսերական զոյգին ներկայացան Գերմանիայի հովանաւորութեան տակ ապրող շվեյցարացիները: Պատասխանելով նրանց ուղերձին, կայսրը իր առանձին ուրախութիւնը յայտնեց այդտեղ պատրաստած ընդունելութեան համար: Ը՛մ քաղաքակրթութիւնը թիւրքիայի վերաբերմամբ—չարոնակեց նա—կատարելապէս նոյնն է, ինչպէս և իմ պապի քաղաքակրթութիւնը, որ միայն այժմ է պտուղներ բերում: Իմ և սուլմանի մէջ եղած գերզգանց յարաբերութիւնները ցոյց տալին, որ երկու պետութիւններ կարող են մնալ բարեկամական յարաբերութիւններ մէջ և փոխադարձ

օգուտներ ստանալ, չը նայած ցեղական և կրօնական դանազանութեան: Նախաձայնը յետոյ կայսրը այցելեց գերմանական դպրոցը, մանրամասն հարց ու փորձ արաւ, նկատելով որ բազմաթիւ օտարերկրացիներ կողմից դպրոցին աւրած այցելութիւնները ապացուցանում են գերմանականութեան յաղթական ոյժը: Երեւանը երբք երբքին, որոնց թուով և օսմանեան հիմնը: Կայսերական զոյգը հեռացաւ դպրոցից արկալի ցոյցերի մէջ:

Մարաշ լրադիրը շերմապէս ողջունում է կայսերական զոյգի այցելութիւնը, որ դարձ վերջում և ազագայ դարձ համար մի վկայութիւն է այն բարի կարծիքի, որով Կարդու Մեծի ժամանակից պատերազմի մէջ փորձված բոլոր գերմանական կայսրները վերաբերվում են օսմանեան քաջ ազդին: «Փէրջիանա» գրում է սուլմանի իրեն կառավարելի յատկութիւնները և ստում է, որ այդ յատկութիւնները ամենալաւ ապացուցը Վիլհելմ II-ի երկրորդ անգամ գալն է: Այդ այցելութիւնը ամենամեծ ուրախութիւն է թիւրք ժողովրդի համար: Օսմանցիները անուստանալի դէպքերով կապված են Գերմանիայի հետ, որը պատերազմական մի օրինակ է: Երախտագրութիւնը կատարելապէս ընկան է, որովհետև թիւրքերը ի ծնէ զինուորներ են: Երկու ազգերի մեծագոյն բարեկամութիւնը նպատակները միանմանութիւն է ցոյց տալիս: Գերմանիան ամենից առաջ առաջադիմութեան կողմնակից է խաղաղութիւն պահպանելու միջոցով և այս համապատասխանում է և թիւրքական ճաշակին: Երկու պետութիւնների ընկան հանգամանքները նպատակում են նրանք միութեան և այս ամենը ձեռք է բերված սուլմանի իրեն կառավարչի յատկութիւններով: Երկու թագաւորների բանակցութիւնները կը նպաստեն խաղաղութեան հաստատման, որի պահպանութիւնը մասնաւոր այժմեան քաղէին շատ զգալի է և դրա համար բոլոր օսմանցիները անասելի շնորակութիւն են յայտնում: «Նիլգա» ասում է. «Երկու թագաւորների խօսակցութիւնը կարճապէս նրանց ազգերի փոխադարձ բարեկամութիւնը: Երկուսին էլ յատուկ են ամրութիւնը, հզօրութիւնը և քաջութիւնը, մէկը միւսի հայելին է: Սուլմանը 200 միլիոն մարդկանց վրա խալիֆ է, իսկ Վիլհելմը կառավարիչ է մի երկրի, որ քաղաքակրթութեան կենտրոն է համարվում: Սա ըստական է մի քանի փոքրիկ ամպերը ցրվելու համար: Վերջին տարիները Գերմանիային պաշտպանում է Բ. Գուռը բոլոր արտաքին գործերի մէջ: Վիլհելմի և Ումբրտի տեսակցութիւնը նպատակ ունէր պաշտպանել ընդհանուր խաղաղութիւնը»:

ՆԱՄՆԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

Բօստօն, հոկտեմբերի 3-ին Մինչ Պարիզի մէջ Ամերիկայի և Սպանիոյ ներկայացուցիչները հայտարարեցին պայմաններուն վրա կը խորհրդակցեն կամ կը վիճաբանեն, նոս հասարակաց կարծիքը վերջապէս որոշ կերպարանք մը կառնէ: Ամերիկացի պահպանողական քաղաքագետներու ձայնը կամաց-կամաց կը նուազի: Ուաշինգթոնի վերջին խրատներէն վերկայտելին բերող չը մնաց գրեթէ, ընդհակառակը, պնդողներ կան, որ կ'ընէ Ամերիկայի ազատարարը ներկայիս ապրէր, նա առաջինը պիտի լինէր Ֆիլիպին կղզիները գրաւել պահանջողներուն մէջ: Պարիզէն եկած հեռագրերու նայելով հայտարարեան պայմաններու բանակցութիւնն այլ շատ կերկարի, որովհետև Սպանիան կը զփկամակի համակերպել անխուսափելի և խնդիրը շիտովելով ու խառնակելով կը յուսար ժամանակ շահել: Սպանիոյ ներկայացուցիչները կառավարիչն վիճաբանութեան առարկայ կղզիները անտրոյի նանը: Ամերիկան կը մերժէ Սպանիոյ իրաւունքները ծանցնալ Խաղաղականի այդ մասին մէջ: «Փոփակալ Տիւրին իր թնդանութիւնըով գնած է այդ կղզիները», կը ասեն: Նախադարձ նրանց տուած է իր պատուիրակներուն, որ երբ Սպանիան պիտի այդ պահանջին վրա, իրենք ալ 300,000,000 դօլար պատերազմի տուգանք պահանջեն: Այս թեր ու ղէմ պահանջները կը դարբանեն Միացեալ-Նահանգացի ժողովուրդը, և երկրի մը մէջ, ուր ժողովրդին կարծիքը այնքան ազդեցութիւն ունի կառավարութեան վրա, այս պարագան չը կրնար աննկատ թողուիլ: Քուպայի մէջ ալ նոյն թիւրքական և ամաչեալ ա շի քաղաքակրթութիւնը կը տիքէ, սպանիացի զինուորները ամենին չեն փութար կղզիէն դուրս ելնելու, նաւահանդիսանելու ըստ պահանջին նոյն իսկ անօթի կղզիներու նպատակով: Սպանիան պաշարէ: Այս ամենուն, իրը դարման, կառավարիչու, որ նաւային ցոյց մը տեղի ու-

նենայ Սպանիոյ մէջ նաւահանդիսուր, այդ մարդոց հակոցնելու, թէ խաղի ժամանակը անցեր է, թերևս այդ նպատակով ալ է, որ «Iowa» և «Oregon», երկու նշանաւոր մարտանաւեր, կը պատրաստուին Մանիլա գնալու: Տիւրի ոյժը աւելացնելու:

Ակլինարտօն մի պատուիրակ զրկեց է Մարքիսիլին, համոզելու համար, թէ ֆիլիպինացի կարող են ինքզինքնին կառավարել, սակայն ճամբորդներուն ըսածները ասոր հակառակը կապացուցանեն, մանաւանդ որ պատասխաններու բանակին մէջ ալ երկարատևութիւն կայ: Ամերիկացիք չը պիտի ուզեն, որ իրենց այնքան զոհողութեամբ ձեռք բերած կղզիները մի օր այս կամ այն պատրուակով, եւրօպական պետութեան մը որս դառնան:

Պատերազմական դրժերու քննիչ ատենը կազմուեց է և սկսեց է ըննութեանց, դրամ չը պիտի ինայուի պէտք եղած վիճանքը բերելու համար: Գեռ քննութիւնները որոշ աստիճանի մը չը հասած, քաղաքական ընտրութեանց ժամանակը մտեցաւ, սկսած է ընտրութեան պայքարը քօնիկայի ներկայացուցիչները համար: Բանակին այս գայթակարութիւնը այսօր մի ահարկու դէնք է դարձեր հակառակող կուսակցութեան ձեռքը: Ընտրական պայքարը երթալով կը տաքնայ: Կառավարութիւնն այսօր չափէն աւելի հոգ կը տանի զինուորներուն, գանգատներու սրտաճառները վերցած են հիմա, ամեն կարելի միջոց ի գործ կը դրուի անցնալը մտոցնել տարու: Հայ-կամաւոր մը հարաւային բանակներէն մէկէն կը գրէ մասնաւոր նամակի մը մէջ հետեւեալը. «Հիմա շատ հոգ կը տանեն կերակուրին ու ջրին, զուր գտելու մեքենաները դրկում են ամեն գուր, միւր թարմ է, կովերը բանակին մօտ տեղ մը կը մարթուին ամեն օր»: Երիտասարդ կամաւորը շատ դո՛ է իր վիճակէն: «Եստ գործ չունիմք, կըսէ. ամեն օր երկու երեք ժամ զինուորական մարզանք կը նենք, մնացած ժամանակը խաղալով և կարգաւով կանցուցնելը, բրիտանացի ընկերակցութիւն մը, լրագիր, ամառները և շատ մը գրքեր ունի մեծ վրանի մը տակ, որ ամենուն համար բաց է. հին շատ հրահանգիչ բաներ կը գտնուէ կարգաւոր: Եստքը երկու երեկոյ զինուորական պահանջու ունիմք, մնացած երեկոցներն ալ գանապաղ զինուորական նիւթերու վրա դասարկութիւններ կընեն, մտաւական լալուրերի պատկերները, ճակատամարտերու յատակագիծեր և այլն»: Երանի թէ, կաւելցնէ հայ կամաւորը, մեր հայ երիտասարդները մեծ թուով մանէին ամերիկեան բանակը, ուր լաւ ուսեան, աւելի առողջ կենեք, գոհացուցիչ վարձատրութիւն և բան սորվելու մեծ պատենութիւններ կան...»:

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մարտիստ Լուկիէնի, աւստրիական կայսրուհու սպանողը, կը դատվի ժընեվում նոյնմընի 3-ին: Նրա դէմ կազմված մեղադրական ակտը բաղկացած է 400 կերտներից: Արդէն կարգադրված է հաւաքել երկրպիտներին»:

«Պրանսիայի և Վնդիայի յարաբերութիւնները սուր կերպարանք են ընդունում Պաշտօնի հարցի պատճառով: Ինչպէս յայտնի է, գերմանացի Վիլհելմը, խորտուած գրաւելուց յետոյ, առաջ անցաւ Պաշտօնի էլ առնելու, բայց տեսաւ որ այդ քաղաքում հաստատվել են Ֆրանսիացիները: Թէ ում պէտք է պատկանէ այդ նոր երկրը, դա պէտք է վճարել զիջումատրական ճանապարհով: Կաշտովի արդեօք: Անգլիական կառավարութիւնը հրամայել է Լամանի նաւատորմին պատրաստ լինել»:

ԻՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

«Новое Время» լրագրի Կ. Պոլսի թղթակցիցը հետեւեալ սրամիտ պատկերի մէջ է ներկայացնում թիւրքիայի այժմեան դրութիւնը:

«Նաւատորմները ուղարկվեցին Ռէյքոսթ, Նաֆիա և Կարդանը—200,000 ռուբլի: Սիրիայի զօրքերին համազգեստներ կայսրին զինուորիցու համար—45,000 ռուբլի: Տուած է Բերլինից բերել տուած 3 խոհարարներին—5000 ռուբլի: Թանկագին քարեր ընձաների համար—150,000 ռուբլի: Դէպի գերմանական դեսպանատունը տանող փողոցի վրա եղած դատարկ տեղերը ցանկապատ են արված և ցանկապատները «ուրբի» դրցնով են ներկված—5000 ռուբլի: Յաղթութեան և նուաճումների համար—400,000 ռուբլի (նոր կազմակերպող հեծելազօրքի 32 նոր գնդերը):

Յաղթութեան և նուաճումների համար—100,000 ռուբլի (պատուիրված են թնդանութեան կրուպին):

Բէյրութ-Կիւրէի հրկիզանքներն—400 ռուբլի (այդտեղ երկու շաբաթ առաջ ահաղին հրդեհ եղաւ, որ լափեց շինութիւնների կէսը):

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՐԻՉ, 13 հոկտեմբերի: Շէն կոչված դահլիճում տեղի ունեցաւ սօցիալիստիկական կռիւտէտի հրաւիրած միտինգը, որին ներկայ էին մօտ հազար անձ: Աստիկանութիւնը ձեռք էր առել նախագրուչական միջոցներ: Սեքստիան Պօր անարիտաբ իր ճառի մէջ ասաց, որ հասել է համարձակ որոշում ընդունելու ժամանակը, որովհետև պետական յեղափոխութեան նշաններ են նկատվում: Անցնելով Բրէյքուսի դրօժին, հետոքը յարձակվեց զլուսւոր շտաբը, Իեբուլէզի, Գրուստի, Բօլֆօրի վրա, և ասաց, որ ազատութեան կուսակցիները պէտք է պատմեն այդ անձանց: Ժողովը ընդունեց մի բանաձև, որով առաջարկում է բոլոր ազատ քաղաքացիներին խմբել զիմարերու ընկացիային և պարտաւորվել պաշտպանելու յեղափոխութիւնը և ազատութիւնը:

ՇԵՐՈՒՐԿ, 13 հոկտեմբերի: Չինուորական միտինգի հրամանով վաղը այստեղ մեծ զօրք կը գայ: Կարգադրված է ընկարաններ պատրաստել:

ՊԱՐԻՉ, 13 հոկտեմբերի: Լրագրները միաձայն հաւանութիւն են տալիս «Երկին գրքին» և մեղութեան նշան են նկատում Անգլիայի և Պրանսիայի յարաբերութիւնների վերաբերութեամբ այն փաստի մէջ, որ Սուլբերի համաձայնեց իր ընկերներին քննութեան ներկայացնել Պրանսիայի պահանջը ստանալու ճանապարհ իր կօշտիաներից դէպի Նեղոս գետը:

ՊԵՆԻՆ, 13 հոկտեմբերի: Կայսրը հիւանդ է երկաւունքի անբուժելի ջարով, բայց կարող է երկար ապրել: Պրանսիական բժիշկը, որ քննել է կայսրին, գտաւ, որ ձախ թոքը փոքր ինչ վրահասված է:

Կ. ՊՈԼԻՍ, 13 հոկտեմբերի: Սուլմանը սուրբից Վիլհելմին մի նկար, որ ներկայացնում է Դաւոթուլի պատերազմը Մեքուսի կիրճում: Գերմանական կայսերական զոյգը աղբատները օգտին նուիրեց 56,000 ֆրանկ:

ՎԻՆՆԱՍ, 13 հոկտեմբերի: Գիտութեան ըլլող Պէլիս առողջութիւնը բաւարար է. հիւանդանոցի մէջ գետեղված միւս անձինք առողջ են: Գիտութեան մի ըլլող, որ իրան վատ էր զգում, ենթարկվեց պատուաստման հակաժամատախտային հիւթով:

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՆՇԱՐՈՒՐ (Պարսկատան): Պ. Շահնազարեան և ընկերներ. Ձեր նամակն ստացաւք, բայց առանց 17 ռուբլի փողի, որը մասին գրում էք: Բարեհաճեցէ կարգադրել:

ՊԱՐԻՉ, Ա. Ա. Ձեր վերջին թղթակցութիւնը անկարող եղանք տպագրել:

ԱԹԱԼՅԱՅԻՆՈՒՆ. Ջ. Տ.—Գ. Ձեր երկու թղթակցութիւնը ըլլա տեսնել չին կարող մեզանից անկախ պատճառներով:

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՍՏՆՈՒՄ Է

Մ ա ղ ա տ ա ռ Ն 1 զնաջըր դուրս է դալիս ԲԱՊՈՒԹՅՈՒՆ դէպի ԹԻՖԼԻՍ ցեղեկայ 4 ժամին և 5 րօպէին: Թ Է Փ Լ Ե 5 Հանուած առաւօտեան 8 ժամ 26 րօպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱՊՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րօպէին: Բ ա թ ու մ է Հանուած երեկոյեան 8 ժամ և 47 րօպէին:

Մ ա ղ ա տ ա ռ Ն 3 զնաջըր դուրս է դալիս ԲԱՊՈՒԹՅՈՒՆ դէպի ԹԻՖԼԻՍ զեշերվայ 12 ժամ 20 րօպէին: Թ Է Փ Լ Ե 5 Հանուած երեկոյեան 6 ժամ և 33 րօպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱՊՈՒՄ Երեկոյեան 7 ժամ 48 րօպէին: Բ ա թ ու մ է Հանուած առաւօտեան 8 ժամ 28 րօպէին:

Մ ա ղ ա տ ա ռ Ն 2 զնաջըր դուրս է դալիս ԲԱՊՈՒԹՅՈՒՆ դէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 20 րօպէին: Թ Է Փ Լ Ե 5 Հանուած երեկոյեան 8 ժամ 22 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱՊՈՒՄ 5 դուրս գալիս Երեկոյեան 9 ժամ 5 րօպէին: Բ ա ղ ու է Հանուած ցեղեկայ 12 ժամ 59 րօպէին:

Մարդատար Ն 4 զնաջըր դուրս է դալիս ԲԱՊՈՒՄ Թ Է Փ Լ Ե 5 Հանուած առաւօտեան 8 ժամ 35 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱՊՈՒՄ 5 դուրս գալիս Երեկոյեան 9 ժամ 7 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱՊՈՒՄ և դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րօպէին: Բ ա ղ ու է Հանուած առաւօտեան 5 ժամ 45 րօպէին:

